Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

Թումո կենտրոն կառուցելու վերաբերյալ

ք. Մասիս 06.07.2022թ.

Սիմոնյան կրթական հիմնադրամը, այսուհետ՝ Կողմ 1, ի դեմս գլխավոր տնօրեն Մարի Լու Փափազյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **Մասիսի համայնքապետարանը,** ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի, այսուհետ՝ Կողմ 2, մյուս կողմից, համատեղ հիշատակվելու դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր), հետևյալի մասին.

1. **Հուշագրի առարկան**

1.1. Կողմերը, նպատակ ունենալով նպաստել Մասիս համայնքի զարգացմանը, երիտասարդության շրջանում բարձր տեխնոլոգիաների նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը և տարածմանը, պարտավորվում են ներդնել իրենց լավագույն ջանքերը Կողմ 1-ի կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» բարեգործական ծրագրի շրջանակներում Մասիս համայնքի Մասիս քաղաքի Հանրապետության փողոցում, ավագ դպրոցի հարևանությամբ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 7,100.00 քմ հողամասի (անշարժ գույքի վկայական՝ թիվ 2696757, տրված՝ 12.09.2009թ., այսուհետ՝ Հողատարածք) վրա Թումո կենտրոն կառուցելու գործում:

1.2. Կենտրոնի՝ արհեստի և տեխնոլոգիաների ոլորտներում մատուցվող կրթական ծրագրերից անվճար օգտվելու հնարավորություն են ունենալու 12-ից 18 տարեկան երեխաները, ինչպես նաև Կողմ 1-ի կանոնադրությամբ նախատեսված այլ անձինք (այսուհետ՝ Շահառուներ):

1.3. Հուշագրի 1.1. կետում նշված նպատակների իրականացման համար Կողմ 2-ը մտադիր է Կողմ 1-ին նվիրաբերել Հուշագրի 1.1. կետում նշված Հողատարածքը:

2. **Կողմերի իրավունքները և պարտականությունները**

2.1. Կողմ 2-ը պարտավոր է՝

2.1.1. Հողատարածքի նվիրաբերության պայմանագրի կնքման հնարավորության ապահովման համար ձեռնարկել իրենից կախված անհրաժեշտ բոլոր գործողությունները:

2.1.2. Նվիրաբերության պայմանագրի կնքման հնարավորության դեպքում նվիրաբերել երրորդ անձանց իրավունքներով չծանրաբեռնված Հողատարածք:

2.1.3. Հողատարածքի նվիրաբերությունը իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

2.1.4. Նվիրաբերությունը ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ իրականացնելու դեպքում հատուցել Կողմ 1-ին պատճառված վնասները:

2.2. Կողմ 2-ը իրավունք ունի՝

2.2.1. Պահանջել Թումո կենտրոնի կառուցման աշխատանքները սկսել և ավարտել սույն հուշագրում նշված ժամկետներում:

2.2.2. Պահանջել Մասիս համայնքի բնակիչ հանդիսացող Շահառուներին տրամադրել կենտրոնի ծառայություններից օգտվելու իրավունք:

2.2.3. Թումո կենտրոնի կառուցման աշխատանքների ավարտից հետո վեց ամսվա ընթացքում Կողմ 1-ից պահանջել տեղեկություն՝ ծրագրով կատարված ներդրումների արժեքի մասին:

2.2.4. Պահանջել Թումո կենտրոնի կառուցման աշխատանքները իրականացնել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շինարարական նորմերի և այլ պահանջների պահպանմամբ:

2.3. Կողմ 1-ը պարտավոր է՝

2.3.1. Թումո կենտրոնի կառուցման համար Հողատարածքը Կողմ 1-ին սեփականության իրավունքով փոխանցելու պահից սկսած 3 տարվա ընթացքում իրականացնել նվազագույնը 400,000,000.00 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ արժողությամբ բարեգործական ծրագիր:

2.3.2. Կառուցել անհրաժեշտ տեխնիկական հագեցվածություն ունեցող կենտրոն, որը թույլ կտա շաբաթական սպասարկել առավելագույնը 2,300.00 (երկու հազար երեք հարյուր) աշակերտի (սպասարկման առավելագույն չափը ներկայացված է 1 աշակերտի շաբաթական մեկ այցի հաշվարկով) և համայնքում ստեղծել առնվազն 5 (հինգ) նոր աշխատատեղ:

2.3.3. Թումո կենտրոնի կառուցման աշխատանքները սկսել և ավարտել սույն հուշագրում նշված ժամկետներում:

2.3.4. Թումո կենտրոնի կառուցման աշխատանքները իրականացնել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շինարարական նորմերի և այլ պահանջների պահպանմամբ:

2.4. Կողմ 1-ն իրավունք ունի՝

2.4.1. Իր հայեցողությամբ սահմանել Թումո կենտրոնի կառուցվող շենքի ներքին և արտաքին տեսքը, դիզայներական լուծումները:

2.4.2. Իր հայեցողությամբ սահմանել Թումո կենտրոնի ուսուցման ծրագիրը և դրա բովանդակությունը:

2.4.3. Կառուցվող Թումո կենտրոնը շահագործել իր կանոնադրային նպատակներին համապատասխան:

3. **Եզրափակիչ դրույթներ**

3.1. Օրենքով կամ Հուշագրով իրենց վերապահված իրավունքների ու պարտականությունների իրացման մասին Ծանուցումները Կողմերը միմյանց կարող են ներկայացնել նաև սույն հուշագրում նշված էլ. փոստի հասցեներին նամակներ կամ փաստաթղթերի էլեկտրոնային կամ սկանավորված տարբերակները ուղարկելու միջոցով: Հուշագրին համապատասխան ներկայացված ցանկացած ծանուցում պետք է կազմված լինի գրավոր ձևով և ստորագրված՝ ուղարկող Կողմի անունից գործելու համար լիազորված անձի կողմից: Այդպիսի ծանուցումը կարող է հանձնվել անձամբ, ուղարկվել փոստով՝ պատվիրված նամակով, կամ փոխանցվել ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապով՝ սույն պայմանագրի ստորագրության տողից առաջ նշված հասցեներով կամ համարներով:

Ծանուցումը կհամարվի ստացված՝

- առձեռն հանձնելու կամ պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ փաստացի հանձնման ամսաթվին և ժամանակին,
- ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստով փոխանցման դեպքում՝ ֆաքսիմիլային (էլեկտրոնային) ապարատով տպված փոխանցման արձանագրությամբ հաստատված ուղարկման ամսաթվին և ժամանակին, պայմանով, որ եթե ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստով փոխանցումն իրականացվում է սովորական աշխատանքային ժամերից դուրս, ծանուցումը կհամարվի ստացված հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին:

3.2. Հուշագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

3.3 Հուշագիրը դադարում է կողմերի ստանձնած մտադրությունների պատշաճ կատարմամբ:

3.4 Հուշագրով սահմանված պայմանների ապահովման պարագայում Կողմերը հայտնում են իրենց մտադրությունը՝ կնքելու Հողատարածքի նվիրաբերության պայմանագիր՝ պահպանելով Հուշագրով սահմանված մտադրությունները և նպատակները:

3.5 Հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Հուշագրի մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները և այլ վավերապայմանները.

ԿՈՂՄ 1	*ԿՈՂՄ 2*
Սիմոնյան Կրթական Հիմնադրամ Հասցե՝ ՀՀ, Երևան, Հալաբյան 16 ՀՎՀՀ՝ 01245672 Բանկ՝«*ԷՅՉ-ԷՄ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ»* ՓԲԸ հ/հ 21700-002-245702-001 էլ. փոստի հասցե՝ pegor.papazian@tumo.org **Գլխավոր տնօրեն՝** **Մարի Լու Փափազյան**	**Մասիսի համայնքապետարան** Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4 ՀՎՀՀ՝ 04240324 էլ. փոստի հասցե՝ masismer@mail.ru **Համայնքի ղեկավար՝** **Դավիթ Համբարձումյան**